

րազին կերպարանօր թիկնաթոռաց վրայ
կործանած լուի կը մուսլին: Թեթե գլխա-
ցաւութիւնէ մը ես իսկ ըմբռնեալ, կ'ըզ-
գայի որ ծովային ազգեցեալիսն անտարբ
հետեանքը կրելու էի: Դժուր բռնելը ա-
նանկ գէշ բուն մըն է և տնանկ անտանելի
նեղութիւն կը պատճառէ, որ ով որ չէ
փորձած կարելի չէ գողափար առնու:
Կ'երևի թէ տկարութեան բուն աթոռը
գլխուն մէջն է: Կրողին աչքերը կը մթն-
նան, ու տեսարանը մուշ կերպարանք
մը կ'առնու: Գլխայ պտույտը սրտի խառ-
նուքն ալ կը բերէ, որ հետզհետէ սաստկա-
նալով հարկ է որ մարդ ստամբսը ինչ
ունի դարս տայ: Այն առեւն ամենայն ինչ
գանելի կու գայ, ևս տաւալ կերակրոյ
հօտը: Ախորժակն բոլորովին կը գոցուի,
ու մարմնոյն վրայ սաստիկ տկարութիւն
մը կու գայ: Յորչափ նաւուն շարժմունքը

կը տեէ՛ այն տկարութիւնն ալ կը շարու-
նակէ՛ մերթ ընդ մերթ անտանելի փոխու-
ղակոն նեղութիւններ տալով: Եւ այս նե-
ղութիւնք այնպէս կը սաստկանան՝ որ տը-
կար կազմուածքի մարդոց կրնան մինչև
մահ պատճառել: Իմ այս տաքնազու երեք
օր տեւեց՝ նոյնչափ առեւն գլխ անտուգ
բռնելով: Որչափ ալ ջանացած են այս տը-
կարութեան դեղ հնարել՝ ունայն կուած է:
Դեղ չկայ՝ մի միայն զարման կամ թեթեւ-
թիւն նեղութեան որ մարդ միւնայ գտնալ՝
խորշը քաշուիլ ու կռնկի վրայ պառկելն
է: Այն նեղութեան վայրկեանները ոչ եր-
բէք կ'անցնին: Ժամերը անլմնաւի են, իսկ
օրը յաւիտենականութիւն: Բարեբաղդա-
բար շոգեմզին անընդհատ ուժը զմեզ շա-
բունակ կը մղէ ու մենք օր աւուր գէպ ՚ի
Պոմպէյ կը մերձենանք:

կը շարունակուի.

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏԵՆԵՑ:

« ԵՕԹՆ ՀՈԳԻ ԵՄՔ »

Երէկ ինձ դիպաւ աղջկիկ մի սիրուն,
որ յիւր ըզգեստուց խնդճ ու պատառուն,
Աղքատ գեղջուկ մ'ինձ թուեցաւ.

Ութ տարեկան էր, ինքն ըսաւ:

Անոյշ 'ի տես, աչք գեղեցիկ կապուտակ,
Ժըպիտն անմեղ. եւ իբր յոսկեայ շրջանակ
Խիտ խիտ իւր մաշէրն
Կապէին գերեան:

« Ընդ եղբայր և ընդ քուրիկ քանի էք դուք » հարցուցի.
Նա կեցաւ զարմանալով ինձ նայելու, և յետոյ

Պատասխանեց. — « Քանի. Եօթն եմք ».

« Ըսէ ինձ, ո՞ր կը բնակիք »: — Եւ փոքրիկն.

« Եօթն եմք. երկուքն 'ի մօտ քաղաքս գնացին

Աշխատելու, և միւս երկուք ծովու վրայ.

Եւ երկուք այլ՝ մէկըն քուրիկ միւսն եղբայր

Գերեզմանոցն արդ կու հանդիւն.

Եւ մենք միակ, մայրիկս ու ես յայն հիւղին

Մօտիկ իրենց քով կ'ապրինք »:

« Եօթն ըսիր. տեսնեմք. երկուքն 'ի ծովու,

Միւս այլ երկուք 'ի քաղաք, դու . . .

Ուրեմն . . . հիմայ նորէն դարձիր գումարելու,

Եւ կը տեսնաս սրխալ հաշիւդ »:

« Բայց այո՛. ամենը մէկտեղ » — կրկնեց դարձեալ —

« Եօթն եմք ըստոյդ հաւաստեալ . . .

« Եւ միւս երկուքն 'ի գերեզման ուր կան 'ի քուն »:

« Դու կը խօսիս, վազես, կ'ապրիս, ձագունկ սիրուն,

Այլ այն երկուքն 'ի գերեզման
Ոչ կը շարժին , ոչ ունին կեանք . . .
Տես աղ ուրեմն հինգ էք դուք » : —
Առանց բանիցա ուշ զընելու
Աղջիկն նորէն տուտ ըսեղ .

« Տէր իմ , տեսնաս անդ 'ի հեռուն

Այն դուռարի երկու ածուն
Որք և տատի չը նըշմարտին
Գիշ մը հեռի մեր հըղիկէն
Մեծ եղենոյն չըթին ներքեւ . . .

Էտ ուրեմն . հոն մեր Օննիկն ու Աննիկ

Հանգչին 'ի քուն մօտ մառիկ :
Բոտէպ կանոյ խոտոյն վերայ
Ինձ հետա առած ապով դուլպայ
Կ'երթամ այն տեղ աշխատելու
Եւ կու նրստիմ հոն անոնց քով :

Նո և երբեմն թէ իրիկունն է գեղեցիկ

Պայծառ երկինքն յըստակ մեղմիկ ,

Պընտկա 'ի ձեռա կ'ընամ 'նաթիմ' ու կ'ընթերմ անդ .

Աննիկըն նախ ինկաւ հիւանդ .

Աննիկ սիրուն .

Հեծել մը նախ ապու հաղալ . . . ապու կեցաւ

Եւ մեղմէ անդարձ թըռու :

Ամենայն օր ամառն ամբողջ

Օննիկն և ես յայց կ'երթայինք

Եւ միտքան կու խաղայինք

Գերեզմանին նորա չորս կողմ :

Բայց եղանակն երբ ցըրտեց

Ձիւնն ըսպիտակ հոշն ծածկեց ,

Սառին վերայ քայլող մնայի ես միայնակ .

Օննիկն էր խոնջ վատակեալ ,

Այսքը նիհար և տըժգոյն :

Յանկարծ օր մ'ալ ինքն 'ի բաց

Օննիկն ազնիւ մեր Աննիկին 'նկեր զընաց

Եւ առնթմեր նընձէ նսրուն : —

« Եթէ երկու վախճանեցան » — բերի վրոց —

« Եթէ Աստուած զանոնք առաւ ,

Այսօր քանի էք դուք ուրեմն : —

Եւ միան նորէն — « Եօթն եմք , տէր իմ » . —

« Երկուք մեռան , սիրուն ձագուկ » —

Դարձեալ ըսի — « մեռան երկուքն » : —

« Անոնց հողին է 'ի յերկինս » : —

Եւ բանքս եղան անհընարին համոզելու ,

Նա միշտ յիւր միտքն հաստատուն ,

« Հաւատա՛ — պընդէր ըստէպ — ինձ դու , տէր իմ ,

Հաւատա՛ , որ ըստուգիւ եթմն հոգի եմք » :

Թարգմանարար 'ի ՌԻՈՒՏՍՎՈՐՏԷ